ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

(Ըստ 1917 թ. գյուղատնտեսական հաշվեհամարի նյութերի)

Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

Արևելյան Հայաստանի նոր շրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության ամենաբարդ և միաժամանակ կարևորագույն պրոբլեմներից է բնակչության՝ այդ թվում և գյուղացիության սոցիալական կառուցվածքի ուսումնասիրությունը։ Սովետահայ պատմաբանների և տնտեսագետների կարևորագույն խնդիրներից մեկը եղել է կապիտալիզմի դարաշրջանում բնակչության սոցիալական կառուցվածքում կատարված փոփոխությունների, գյուղացիության սոցիալական շերտավորման աստիճանի բացահայտումը։ Այդպիսի հարցերի լուսաբանումը շատ կարևոր է այն իմաստով, որ դրա պարզաբանման միջոցով միայն կարելի է հստակորեն պատկերացում կազմել գյուղի սոցիալական դիֆերենցիացիայի, դասակարգային պայքարի սրման աստիճանի, հետևապես և բուրժուա-դեմոկրատական ու սոցիալիստական հեղափոխությունների առաջացման սոցիալ-տնտեսական օբյեկտիվ նախադրյալների մասին։

Եթե նախահեղափոխական ժամանակաշրջանում ազնվականական և բուրժուական պատմագիտության մեջ այդ ուղղությամբ ըստ էության ոչ մի լուրջ փորձ չի կատարվել, քանի որ նման ուսումնասիրությունների անցանկալի սոցիալ-քաղաքական հետևանքներից խուսափելով այդ հարցերը գիտակցորեն շրջանցվել են, ապա սովետահայ պատմաբաններն ու տնտեսագետները հասել են նշանակալի հաջողությունների։ Արևելյան Հայաստանի ազգաբնակչության և մասնավորապես գյուղացիության սոցիալական կազմի ուսումնասիրության խնդրին են անդրադարձել Ա. Բադալյանը, Հ. Թումանյանը, Վ. Ռշտունին, Ա. Համբարյանը, Մ. Ադոնցը, Ա. Վարդանյանը և ուրիշներ[1]։

Հարկ է նշել, որ Արևելյան Հայաստանին վերաբերող նյութերը և վիճակագրական ժողովածուներն ըստ ամենայնի հնարավորություն չեն ընձեռում (ռուսական նահանգների նման) վեր հանելու գյուղացիության սոցիալական կազմի լիակատար պատկերը։ Եթե Վ. Ի. Լենինը, օգտագործելով վելիկոռուսական նահանգներում անցկացված զեմստվոյական մարդահամարների և այլ վիճակագրական ժողովածուների տվյալները, իր հանճարի խորությամբ, ըստ գյուղատնտեսական շրջանների արտադրության բնորոշ ցուցանիշների, ցույց է տվել Եվրոպական Ռուսաստանի նահանգների գյուղացիության սոցիալական շերտավորման աստիճանը և դասակարգային բաշխվածությունը, ապա այդ բանը չափազանց դժվար է որոշել Ռուսաստանի ծայրամասերի, այդ թվում Անդրկովկասի ու Հայաստանի համար, որտեղ զեմստվո չլինելու պատճառով զեմստվային վիճակագրություն չի կատարվել։ Դրա համար էլ սովետահայ

---

[1] *Տե՛ս* А. Бадалян. Население Армении со времени присоединения ее к России и до наших дней (*ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.)*, 1953, № 5); О. Е. Туманян. Экономическое развитие Армении. Ч. 1, Ереван, 1954; М. А. Адонц. Экономическое развитие Восточной Армении в XIX веке. Ереван, 1957; А. С. Амбарян. Развитие капиталистических отношений в армянской деревне. Ереван, 1959; *Վ. Հ. Ռշտունի. Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության. հ. Ա, Երևան, 1960, հ. Բ, Երևան, 1968։ Ս. Ադոնց. Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դ. սկզբին. Երևան, 1968։ Ա. Խ. Վարդանյան. Արևելյան Հայաստանի գյուղացիության սոցիալ-տնտեսական դրությունը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914—1917 թթ.). Երևան, 1981 (ավտոռեֆերատ)։*

պատմաբաններից ու տնտեսագետներից ոմանք Արևելյան Հայաստանի գյուղացիության սոցիալական շերտավորումը ցույց տալու համար, եղած նյութերի ու վիճակագրական տվյալների միակողմանիության և աղքատիկության հետևանքով, հիմք են ընդունել գյուղացու բաժնեհողը կամ կատարած ցանքը, ոմանք՝ անասնագլուխը կամ բանող ուժը, իսկ ոմանք էլ՝ գյուղացիական տնտեսությունների ուսումնասիրված սահմանափակ թվով բյուջեները և այլն։ Եվ պատահական չէ, որ նրանց կատարած հաշվումները շատ հաճախ էական տատանումներ են ստալիս և հետևաբար առաջ բերում տարակարծություններ։

Այդուհանդերձ, Երևանի նահանգը վերոհիշյալ ուսումնասիրողների կողմից բավականաչափ հետազոտվել է, մի բան, որը չի կարելի ասել Արևելյան Հայաստանի մյուս հատվածներից մեկի՝ Կարսի մարզի մասին։ Բանն այն է, որ մարզի վերաբերյալ գոյություն ունեցող նյութերը և վիճակագրական ժողովածուները ավելի սահմանափակ են, իսկ եղածներն էլ շատ ավելի աղքատիկ և միօրինակ։ Այսպես, եթե Երևանի նահանգում և Լոռու գավառամասում ֆիսկալ նպատակներով տարբեր տարիների երեք անգամ հետազոտվել են գյուղացիական բյուջեներ՝ 1884 թ.՝ 18 բյուջե, 1894 թ.՝ 6 և 1902 թ.՝ 17 (ընդամենը՝ 41 գյուղացիական բյուջե), ապա Կարսի մարզում չի հետազոտվել գյուղացիական ոչ մի բյուջե[2]։ Այս տեսակետից թերևս բացառություն են կազմում 1917 թ. գյուղատնտեսական հաշվառման (հաշվեհամարի) տվյալները, որոնք հիմք են ստալիս որոշ հետևություններ կատարել Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նախօրյակին գյուղացիության սոցիալական կազմի վերաբերյալ։

Ինչպես հայտնի է, 1916 և 1917 թթ. Ռուսաստանի կենտրոնական վիճակագրական կոմիտեն (ԿՎԿ) ավելի քան 77 նահանգներում ու մարզերում անցկացրել է համառուսաստանյան գյուղատնտեսական համատարած հաշվեհամար (հաշվառում), որը թելադրված էր պատերազմի տարիներին ուժեղացող պարենային ճգնաժամի պայմաններում պարենամթերքի և հումքային ռեսուրսների հայթայթման ու հաշվառման անհրաժեշտությամբ[3]։ Գյուղացիական տնտեսությունների հաշվառման հարցաթերթիկները ներառել են հարցերի լայն շրջանակ՝ տնտեսության շնչերի, կատարված ցանքի, անասնաքանակի և բանուժի, գյուղատնտեսական ինվենտարի, հողի վարձակալության, վարձու աշխատանքի օգտագործման մասին հարցերը և այլն։

Համանման կարգով հաշվառման են ենթարկվել Երևանի նահանգը և Կարսի մարզը[4]։ Պարզվում է, որ Կարսի մարզում գյուղատնտեսական հաշվառումը անցկացվել է միայն 1917 թ.։ Հաշվառման սկզբնական նյութերը (հարցաթերթիկները) պահվում են Հայկական ՍՍՀ ՊԿՊ արխիվում[5]։ Սակայն դրանք ընդգրկում են ոչ բոլոր գյուղերը։ Որոշ գյուղեր և քոչավայրեր պատերազմի, ռելիեֆային դժվարությունների, կիսանստակյաց բնակչության տեղաշարժերի և այլ հանգամանքների հետևանքով տեղական հաշվառող մարմինները կամ չեն կարողացել հաշվառել, կամ էլ, հնարավոր է, որ փաստաթղթերի մի մասը չի պահպանվել։

---

[2] М. А. Адонц. Экономическое развитие Восточной Армении в XIX веке, с. 365; А. С. Амбарян. Развитие капиталистических отношений в армянской деревне, с. 116 и 259. *Մ. Ադոնց. Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դ. սկզբին, էջ 125։*

[3] С. И. Антонова. Статистические источники по истории СССР, период капитализма. М., 1968, с. 43.

[4] *1916 թ. գյուղատնտեսական հաշվեհամարի նախասկզբնական (նախնական) արդյունքները լույս են տեսել երեք պրակներով. որոնցից մեկն ընդգրկում է Կովկասը. տե՛ս* Предварительные итоги всероссийской сельскохозяйственной переписи 1916 г. Вып. II, Кавказ. Петроград. 1917.

[5] *Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 125, ց. 1։*

1917 թ. գյուղատնտեսական հաշվեհամարի տվյալների հանգամանալից ուսումնասիրությունը միանգամայն բավարար հիմք է տալիս գյուղացիության սոցիալական կազմի, երկրամասի պատերազմական տարիների սոցիալ-տնտեսական դրության և այլ կարևոր հարցերի վերաբերյալ համապատասխան հետևություններ ու եզրակացություններ անել։

Գյուղացիության սոցիալական դիֆերենցիացիայի հետ կապված հարցերը պարզաբանելու համար մենք սույն հոդվածում բազմակողմանիորեն ուսումնասիրել ենք ընդամենը 77 գյուղ, որը կազմում է մարզի բոլոր տիպի գյուղերի ավելի քան 10 տոկոսը կամ $^1/_{10}$ մասը[6]։ Վերոհիշյալ թվով գյուղերը, ըստ օկրուգների տեղաբաշխվում են հետևյալ կերպ՝ Կարսի օկրուգ՝ 20 գյուղ 1258 տնտեսությամբ, Կաղզվանի օկրուգ՝ 14 գյուղ 856 տնտ., Արդահանի օկրուգ՝ 15 գյուղ 362 տնտ. և Օլթիի օկրուգ՝ 28 գյուղ 966 տնտ.։ Ընդամենը 77 գյուղ 3442 գյուղացիական տնտեսությամբ և 25052 շունչ երկսեռ բնակչությամբ։

Ազգային կազմի տեսակետից վերոհիշյալ գյուղերը ներկայացնում են հետևյալ պատկերը. հայկական՝ 15 գյուղ 1319 տնտեսությամբ, ռուսական՝ 2 գյուղ 69 տնտ., հունական՝ 3 գյուղ 259 տնտ., թուրքական՝ 24 գյուղ 790 տնտ., քրդական՝ 20 գյուղ 556 տնտ., ադրբեջանական՝ 7 գյուղ 197 տնտ., թուրքմենական՝ 4 գյուղ 216 տնտ., կարափափախների՝ 1 գյուղ 12 տնտ. և վերջապես իրանական՝ 1 գյուղ 24 տնտեսությամբ։ Սա նշանակում է, որ համամասնական չափով հաշվի են առնված մարզի տարածքում ապրող բոլոր հիմնական ժողովուրդները։ Հետազոտված 77 գյուղերի շարքում թեև թուրքական և քրդական գյուղերն իրենց քանակով գերազանցում են հայկական գյուղերին, սակայն տնտեսությունների ընդհանուր թվով՝ բավական զիջում են։ Բանն այն է, որ թուրքական և հատկապես քրդական գյուղերը սովորաբար բաղկացած էին միջին թվով 2—3 տասնյակ տնտեսություններից, մինչդեռ հայկական գյուղերը՝ մինչև 200 և անգամ ավելի տնտեսություններից։ Այնպես որ վերոհիշյալ 77 գյուղերի գյուղացիական տնտեսությունների 38 տոկոսից ավելին կազմել են հայերը։

1917 թ. գյուղատնտեսական հաշվեհամարի տվյալների հիման վրա գյուղացիության սոցիալական շերտավորման աստիճանը ավելի ստույգ ցույց տալու համար պետք է հաշվի առնել սոցիալ-տնտեսական հասկանիշի բոլոր հիմնական ցուցանիշները՝ հողաբաժինը, ցանքը, անասնագլուխը, բանուժը, վարձակալական համակարգը, գյուղատնտեսական ինվենտարը և այլն։ Սրանցից, ինչ խոսք, գլխավոր ցուցանիշը հանդիսանում է հողը, որովհետև գյուղացիական տնտեսության համար, լինի հողագործական թե անասնապահական շրջան, վճռական գերը, որպես արտադրության գլխավոր միջոցի, պատկանում է հողին։ Վ. Ի. Լենինը նշում էր. «Հողը, անկասկած, արտադրության գլխավոր միջոցն է գյուղատնտեսության մեջ. ուստի և հողի քանակով կարելի է առավել ճիշտ դատել տնտեսության չափերի, հետևաբար, նաև նրա տիպի մասին»[7]։ Եվ պատահական չէ, որ գյուղացիության պայքարը, ամենուրեք և բոլոր ժամանակներում, ամենից առաջ մղվում էր հողի համար։ Միանգամայն իրավացի էր տնտեսագետ Պ. Լյաշչենկոն, երբ նշում էր, որ անասունի բացակայությունը կամ կորուստն ավելի ուղղելի է, քան հողի կորուստը[8]։ Սակայն գյուղացիական

---

6 Հարկ է նշել, որ եթե պատերազմի նախօրյակին մարզում հաշվվում էր բոլոր տիպի ավելի քան 800 գյուղ, ապա պատերազմի առաջին իսկ տարիներից երկրամասում ստեղծված ռազմաքաղաքական անկայուն վիճակի և թուրքական հարձակման մշտական սպառնալիքի պայմաններում մարզի մի շարք գյուղեր՝ մասնավորապես քրիստոնյա (հայկական, ռուսական, հունական) սկսում են արագ կերպով քայքայվել ու ամայանալ։ Այնպես որ արդեն 1917 թ. ամռանը մարզի գյուղերի թիվը բավականին նվազել էր, իսկ շատ գյուղերում էլ բնակչությունն էր նվազել։

7 Վ. Ի. Լենին. Եվ. հ. 19, էջ 402։

8 П. И. Лященко. Мобилизация землевладения в России и его статистика. М., 1905, с. 7.

ծխերի ունեցվածքների միջև շատ մեծ բազմազանություն գոյություն ունի, ուստի և սոցիալական խմբերը ցույց տալու համար պետք է հաշվի առնել բոլոր գործոնները և կոմպլեքսային մոտեցում ցուցաբերել։ Գյուղացիության սոցիալական խմբերը հեշտությամբ զանազանվում են, երբ համեմատության մեջ են դրվում նրանց ունեցվածքային բոլոր ցուցանիշները։ Անշուշտ, այդ նկատի ուներ Վ. Ի. Լենինը, երբ գրում էր. «Գյուղացիության քայքայման վրա խելամտորեն նայելու համար պետք է վերցնել ամեն ինչ ամբողջությամբ՝ և՛ վարձակալությունը, և՛ հողերի գնումը, և՛ մեքենաները, և՛ վաստակները, և՛ առևտրային հողագործության աճը, և՛ վարձու աշխատանքը»[9]։

Ղեկավարվելով Վ. Ի. Լենինի այդ ցուցումներով, մենք ևս հիմք ենք ընդունել ոչ թե մեկ կամ երկու սոցիալ-տնտեսական հատկանիշ, այլ ցուցաբերելով կոմպլեքսային մոտեցում, նկատի ենք ունեցել հաշվառման հարցաթերթիկների առաջադրած բոլոր ցուցանիշները՝ շեշտը դնելով հիմնականում հողաբաժին-ցանքի և անասնագլուխ-բանող ուժի վրա, որովհետև մարզի գյուղացիական տնտեսությունների համար բնորոշ են եղել հացահատիկային կուլտուրաների մշակությունը և անասնապահությունը։

Իր հերթին գյուղացիության բարեկեցության աստիճանը որոշելիս պետք է հիմք ընդունել ոչ այնքան բաժնեհողի չափը, որքան կոնկրետ գյուղացու կատարած ցանքը, որը միաժամանակ արտահայտում է արտադրության միջոցներով նրա ապահովվածության աստիճանը և ընդհանրապես տնտեսական հնարավորությունները։ Այս հանգամանքի վրա պետք է առավել ևս ուշադրություն դարձնել պատերազմական իրավիճակի պայմաններում, երբ բաժնեհող ունեցող տնտեսությունների մի որոշ մասը պատերազմի հետևանքով բոլորովին ցանք չի կատարել, իսկ մյուս մասի ցանքը այդ պատճառով խիստ կրճատվել է՝ թողնվելով անմշակ՝ հարոս, ցել կամ խոպան։

Հետազոտված 77 գյուղերի 3442 գյուղացիական տնտեսությունների խմբավորումը ըստ ցանքսերի մեծության ներկայացնում է հետևյալ պատկերը (տե՛ս աղյուսակ 1)։

Ըստ ցանքի չափերի գյուղացիական ծխերը բաժանել ենք յոթ խմբերի՝ 1) չցանողներ, 2) մինչև 1 դես. ցանողներ, 3) մինչև 3 դես. ցանողներ, 4) մինչև 5 դես. ցանողներ, 5) մինչև 10 դես. ցանողներ, 6) մինչև 20 դես. ցանողներ և 7) 20 դեսյատինից ավելի ցանողներ։ Աղյուսակի տվյալներից կարելի է հետևցնել, որ բոլորովին ցանք չունեցող և մինչև մեկ դեսյատին ցանող տնտեսությունները համարվում են չքավոր. դրանք կազմում են 42,7 տոկոս։ Ինչպես նշում էր Վ. Ի. Լենինը, «մինչև մեկ դեսյատին ցանք ունեցող գյուղացին ի վիճակի չէ այնքան եկամուտ ստանալ, որպեսզի իր բոլոր կարիքները ծածկի»[10]։ Իրենց տնտեսական դրությամբ չցանող և քիչ ցանող տնտեսությունները, որոնք հողը մշակում են ուրիշի անասունը վարձելով, մեծ տարբերություն չեն ներկայացնում։ Հողազուրկ և սեփականազուրկ գյուղացիության մի մասը իր գոյությունը մի կերպ պահպանում էր բատրակությամբ և այլ կողմնակի վաստակներով։ Բոլորովին չցանող տնտեսությունները կազմել են 15,4 տոկոս։ Պետք է նկատել, որ ավելի հաճախ ցանք չեն կատարել նաև այն տնտեսությունները, որոնց աշխատող ձեռքը կանչված է եղել բանակ։ Իհարկե, խոսքը վերաբերում է քրիստոնյա տնտեսություններին։

Միջակ գյուղացիական տնտեսությունների մեջ ներառված են մինչև 3 և մինչև 5 դես. ցանք ունեցող տնտեսությունները, որոնք կազմում են 42,8 տոկոս, իսկ ունևոր գյուղացիների խմբի մեջ՝ հիմնականում 5 դես. և ավելի ցանք ունեցողները, որոնք կազմում են 14,5 տոկոս։ Սակայն ըստ ցանքի սոցիալական խմբերի այդպիսի նորմավորված բաժանումը մեխանիկական կլինի, եթե հաշվի չառնվի գյուղացու տնտեսական հատկանիշի մյուս ցուցանիշները և անգամ ծխերի կազմը։

---

9 Վ. Ի. Լենին. Երկ. հ. 3, էջ 166։

10 Նույն տեղում, հ. 1, էջ 38։

Աղյուսակ 1

Օկրուգներ	Ընդամենը		Չցանողներ		Մինչև 1 դես. ցանող		Մինչև 3 դես. ցանող		Մինչև 5 դես. ցանող		Մինչև 10 դես. ցանող		Մինչև 20 դես. ցանող		20 դես.-ից ավել ցանող		Ծխին միջին հաշվով ընկնում է (դես.)	
	ծուխ	%	ծուխ	%	ծուխ	%	ծուխ	%	ծուխ	%	ծուխ	%	ծուխ	%	ծուխ	%	հող	ցանք
Կարսի	1258	36,5	207	16,4	127	10,1	382	30,4	223	17,7	257	20,4	56	4,46	6	0,5	6,23	3,81
Կաղզվանի	856	24,9	190	22,2	120	14,0	275	32,0	96	11,2	98	11,4	52	6,1	25	2,9	7,73	3,98
Արդահանի	362	10,6	21	5,8	189	52,2	114	31,5	34	9,4	3	0,82	1	0,27	—	—	3,97	1,50
Օլթիի	966	28,0	111	11,5	504	52,2	324	33,5	27	2,8	—	—	—	—	—	—	1,91	1,04
Ընդամենը	3442	100	529	15,4	940	27,3	10.5	31,8	380	11,0	358	10,4	109	3.2	31	0,9	5,16	2,84

Աղյուսակ 2

Օկրուգներ	Ընդամենը ծուխ	Տոկոս	Ընդամենը մշակած ցանք դես.	Տոկոս	Աշնանացան ցանող ծխ.	Տոկոս	Բանջարեղեն ցանող ծխ.	Տոկոս	Ձի չունեցող ծխ.	Տոկոս	Մեկից ավել լծկան ունեցող ծխ.	Տոկոս	Երկու զույգ լծկան ունեցող ծխ.	Տոկոս	Չորս զույգ լծկան ունեցող ծխ.	Տոկոս	Վեց զույգ լծկան ունեցող ծխ.	Տոկոս	Վեցից ավել զույգ լծկան ունեցող ծխ.	Տոկոս	Ունեցած մանր անասուններ	Տոկոս
Կարսի	1258	35,5	25518	40.2	190	15,1	397	31.5	1112	88.4	21	1.7	371	29,5	240	19,1	131	10,6	95	7,5	15384	60,3
Կաղզվանի	856	24,9	19972	31.5	96	11,2	193	22,9	715	83.5	35	4.1	252	29,4	185	21,6	121	11,1	67	7,8	10634	53,2
Արդահանի	362	10,6	7673	12.1	28	7,7	60	16.6	225	62,1	15	4.1	108	29,8	105	29,0	56	15,4	18	5,0	3248	42,3
Օլթիի	966	28.0	10269	16.2	120	12,5	206	21.3	833	86,2	27	2,8	472	48,9	192	19,9	51	5,3	18	1,8	3082	30,0
Ընդամենը	3442	100	63132	100	434	12,6	859	24,9	2885	83,8	98	2,8	1203	34,9	722	20,9	362	10,5	198	5,7	32348	51,0

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, վերոհիշյալ գյուղախմբերում ավելի շատ տարածված էր մանր գյուղացիական տնտեսությունը, որտեղ պատերազմի տարիներին բարձր տոկոս էին կազմում արդեն քայքայված և սեփականազուրկ տնտեսությունները։ Իսկ ունևոր գյուղացիական տնտեսությունների տեսակարար կշիռը, համեմատած Եվրոպական Ռուսաստանի նահանգների և անգամ Երևանի նահանգի կուլակային տնտեսությունների հետ, համեմատաբար ցածր էր[11]։ Դա նշանակում է, որ մարզի գյուղացիության շերտավորումը այն աստիճան չէր խորացել, ինչպես, ասենք, հարևան Երևանի նահանգում, որտեղ 1917 թ. գյուղական պրոլետարական և կիսապրոլետարական (չքավորական) խմբերը արդեն կազմում էին գյուղական բնակչության կեսից ավելին։

XX դարի սկզբներին մեծ չափով կրճատվեց գյուղացիական բաժնեհողի նորման։ Գյուղացիական բաժնեհողի կրճատմանը համապատասխան կրճատվում էր նաև ցանքը։ Եթե 1909 թ. գյուղատնտես Ստ. Կամսարականի հաշվումներով մեկ տնտեսությանը ընկնում էր 3,8 հա[12], ապա 1917 թ., ըստ 77 գյուղերի հաշվառման հարցաթերթիկների տվյալների մեկ ծխին միջին թվով ընկնում էր 2,84 դես. ցանք, կամ այլ խոսքով՝ գյուղացիական ամեն մի տնտեսության ցանքատարածությունը միջին հաշվով կրճատվել է շուրջ մեկ դեսյատինով։

Գյուղացիության ունևորության որոշման կարևորագույն ցուցանիշներից է բանող ուժով նրա ապահովվածությունը։ Գյուղացիության սոցիալական կազմի պատկերը որոշելու համար ևս հողաբաժնից ու ցանքից զատ ոչ պակաս կարևոր հատկանիշ է բանող ուժը և ընդհանրապես մթերատու անասնագլուխը։ «...Ամենից ճիշտ կլինի,— գրում էր Վ. Ի. Լենինը «Գյուղական չքավորությանը» բրոշյուրում,— հարուստ, միջակ և չունևոր գյուղացիներին տարբերել նրանց ունեցած ձիերի քանակությամբ։ Բազմաձի գյուղացին գրեթե միշտ հարուստ գյուղացի է, որ նրա թե՛ ցանքը շատ է, թե՛ հող ունի, բացի լոկ հողաբաժնից և թե՛ պահուստ փող ունի»[13]։

Հողամշակության համար կարևոր է քաշող ուժի առկայությունը։ Բանող ուժի դերն ու նշանակությունը ամենից ավելի լավ էին զգում ու ըմբռնում իրենք երկրագործ գյուղացիները։ «Հողի մշակման համար,— կարդում ենք գյուղացիական մի հանրագիր-խնդրագրում,— բանող ուժն այն Արքիմեդյան լծակն է (ընդգծումը բնագրինն է—Ա. Հ.), առանց որի չի կարելի պատկերացնել հողի շահագործումը և նրա լիառատ ու կենսատու բարիքներից օգտվելը»[14]։ Այնպես որ միայն հող ունենալը դեռ բավարար պայման չէ հողագործական արտադրություն կազմակերպելու համար։

Գյուղացիության խմբավորումը ըստ բանող անասունի (բանուժի) ներկայացված է երկրորդ աղյուսակում։

1917 թ. գյուղատնտեսական հաշվառման տվյալներից երևում է, որ 77 գյուղերի գյուղացիական տնտեսությունների շուրջ 1/4-ը բանուժ բոլորովին չի ունեցել։ Հասկանալի է, որ լծկան չունեցող տնտեսությունը հնարավորություն չուներ իր բաժնեհողը մշակելու։ Այդ տնտեսությունների մի փոքր մասը հարկադրված էր իր փոքրիկ հողաբաժինը կիսարարության կամ այլ սկզբունքներով վարձակալության տալ հարուստ տնտեսատիրոջը։ Եվ անկախ հողը վարձակալության տալու հանգամանքից ու ստացած եկամտի չափից, այդ տնտեսությունները համարվում էին չքավոր, որովհետև չէին կարողանում սեփական տնտեսություն վարել։

---

11 Տե՛ս Մ. Հ. Ագոնց. Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դ. սկզբին, էջ 118—119 և 276։

12 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 375, ց. 1, գ. 23, թ. 133։

13 Վ. Ի. Լենին. Երկ. հ. 7, էջ 190։

14 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 99, թ. 2։

Ըստ բանուժի տնտեսությունների կազմը ցույց տալու համար վերցրել ենք անասունի խմբեր ոչ թե կենտ թվերով, այլ զույգ, որովհետև մարզի հիմնական բանուժը եզն էր, իսկ գյուղատնտեսական աշխատանքները և այդ թվում առաջին հերթին հերկը կատարվում էր միայն զույգ լծկանով, մինչդեռ, օրինակ, Ռուսաստանում հիմնական բանուժը ձին էր և հերկը կարելի էր կատարել մեկ ձիով։ Մեկ բանուժ ունեցող տնտեսությունը անպայման չքավոր է այն պարզ պատճառով, որ նախահեղափոխական Հայաստանում հիմնական բանուժը եղել է եզը կամ գոմեշը։ Ուշագրավ է, որ մեկ բանուժ ունեցող տնտեսությունները կազմել են շատ աննշան տեսակարար կշիռ՝ ընդամենը 2,8 տոկոս, այն դեպքում, երբ բանուժ չունեցող տնտեսությունները կազմել են 24,9 տոկոս, իսկ երկու բանուժ ունեցողները՝ 34,9 տոկոս։ Այս փաստը մեկ անգամ ևս հաստատում է, որ մարզի գյուղացիության համար բոլորովին գործածական չի եղել մեկ բանուժը։ Պատմատնտեսագիտական գրականության մեջ ընդունված է համարել, որ մեկ բանող խոշոր եղջերավոր անասունը (եզը կամ գոմեշը) իր ուժով և տնտեսական նշանակությամբ հավասար է $^2/_3$ ձիու[15]։ Ինչպես Անդրկովկասի մյուս նահանգներում, այնպես էլ Կարսի մարզում փոքր տոկոս էր կազմում և մեծ մասամբ տարածված էր ռուս վերաբնակիչների տնտեսություններում։ Այսպես, հետազոտված 77 գյուղերի տվյալներով ձի չունեցող տնտեսությունները կազմել են շուրջ 84 տոկոս։

Սակավազորների և չքավորների խմբին պետք է դասել նաև 2 բանուժ ունեցող տնտեսությունների մի որոշ մասը, որովհետև այդ տնտեսություններում, ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, պատերազմական հանգամանքով կամ աշխատող ձեռքերն են բացակայել, կամ բաժնեհող չի եղել, իսկ նրանք, ովքեր ունեցել են, հաճախ չեն կարողացել ցանք կատարել, կամ էլ սերմացու և գյուղատնտեսական ինվենտար չեն ունեցել։ Հենց միայն այն փաստը, որ մեր կողմից հետազոտված 3442 տնտեսությունների մոտ 40 տոկոսը գյուղատնտեսական ոչ մի ինվենտար չի ունեցել, ինքնին ցույց է տալիս, որ ինվենտար չունեցող տնտեսությունների տոկոսի մեջ են մտնում ցանք և բանուժ չունեցողները, ինչպես նաև մինչև 2 բանուժ ունեցողների մի մասը։ Հաշվառման հարցաթերթիկներում արձանագրվել են նաև այնպիսի բացառիկ դեպքեր, երբ ինվենտար չեն ունեցել 4 և անգամ 6 բանուժ ունեցող տնտեսություններ և ընդհակառակը, գյուղատնտեսական պրիմիտիվ ինվենտար են ունեցել բոլորովին բանուժ չունեցող և ցանք չկատարած տնտեսությունները։

Միջակ պետք է համարել գյուղացիական այն տնտեսությունը, որ ստացած համախառն եկամուտը ոչ միայն բավարարում է ընտանիքը կերակրելուն, այլև տալիս է որոշ ավելցուկ՝ կուտակման կամ վաճառքի համար։ Սակավազոր և միջակ տնտեսությունների մի զգալի մասը, որոնք ունեին 2—3 և մինչև 4 բանուժ, գութանավարի ժամանակ դիմում էին բանուժերի և աշխատող ձեռքերի միավորման՝ համատեղ աշխատանքի (համկալության-հարաքաշության) սկզբունքին։ Սակայն բացառված չէին նաև այն դեպքերը, երբ բանուժից զուրկ գյուղացին հարկադրված դիմել է հարուստ գյուղացուն և իր համար ոչ նպաստավոր պայմաններով վարձել է նրա բանող անասունը՝ իր հողակտորը հերկելու համար։

Գյուղացիության սոցիալական կազմը ցույց տալու համար այլևայլ գործոններից բացի անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ գյուղի ազգային պատկանելությունը։ Օրինակ, քրդական գյուղի շերտավորման աստիճանը որոշելիս, ի տարբերություն հայկական կամ ռուսական գյուղերի, պետք է հաշվի առնել առաջին հերթին մթերատու անասունի և ընդհանրապես անասնագլխի քանա-

---

[15] С. Заваров. Опыт исследования сельского хозяйства хлебородного района Эриванской губернии и Карсской области. Тифлис, 1899, с. 119; А. С. Жирнов. Краткий очерк скотоводства в Закавказском крае. Тифлис, 1901, с. 9.

կը, որովհետև «անասունը քրդական ընտանիքի ունևորության գլխավոր ցուցանիշն է»[16]։ Այսպես, Կաղզվանի օկրուգի քրդական Բազարջիկ գյուղի գյուղացիության բարեկեցության որոշման ամենից ավելի էական հատկանիշը մթերատու անասնագլխի քանակն է։ Գյուղի թվով 83 ծխերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չնայած այստեղ գյուղացիական բաժնեհողի նորման մի քանի անգամ բարձր է եղել մարզի միջինից՝ ծխին 21,4 դես. հողաբաժին կամ՝ 13,2 դես. ցանք, սակայն այն մեզ լիակատար հիմք չի տալիս վեր հանել գյուղի ունեցվածքային կազմի ռեալ պատկերը։ Որովհետև, եթե այստեղ հաշվի առնենք միայն տնտեսությանն ընկնող բաժնեհողի քանակը կամ կատարված ցանքը և երկրորդական պլան մղենք քրդական տնտեսության համար այնքան բնորոշ ճյուղը՝ անասնապահությունն ու անասնագլխի քանակը, ապա կստացվի, որ Բազարջիկի ծխերի 70 տոկոսից ավելին եղել են հարուստներ և միայն մնացածը՝ միջակներ ու չքավորներ։ Իսկ երբ գյուղացիության սոցիալական խմբերի կազմը որոշելիս հիմք ենք ընդունում առաջին հերթին մթերատու անասնագլխի քանակը և բանուժը, ապա տեսնում ենք, որ ունևոր տնտեսությունների տոկոսը կիսով չափ կրճատվում է[17]։ Պարզվում է, որ գյուղի հողերը եղել են հիմնականում բնական խոտհարքեր, կամ էլ անջրդի (դեմի) գարու դաշտեր, որոնք ի սպաս են դրվել մթերատու անասնապահության զարգացմանը։

Երկրորդ աղյուսակից երևում է, որ ունևոր տնտեսությունների ձեռքում էր կենտրոնացված անասնաքանակի կեսից ավելին՝ 51 տոկոսը։ Եթե հաշվեհամարի 77 գյուղերի տվյալները ընդհանրացնենք ամբողջ մարզի վերաբերյալ՝ մի բան, որի համար միանգամայն ռեալ հիմքեր ունենք, ապա կտեսնենք, որ 1890-ական թթ. կեսերից մինչև 1917 թ. ցանք չունեցող տնտեսությունները ավելացել են՝ 6,2 տոկոսից հասնելով 15,4 տոկոսի, իսկ բանուժ չունեցողները՝ 17,6 տոկոսից հասնելով 24,9 տոկոսի[18]։ Այստեղից պարզ ու հստակ երևում է մեկ քսանամյակի ընթացքում գյուղացիական տնտեսությունների քայքայման պրոցեսը, որի խորացման գործում, անշուշտ, իր նեգատիվ դերը խաղաց նաև պատերազմը։

Գյուղացիության սոցիալական շերտավորման որոշման համար կարևոր հատկանիշ է նաև վարձակալական համակարգը։ Մեր կողմից հետազոտված 3442 գյուղացիական տնտեսություններից բանվորներ՝ բատրակներ, օրամշակներ վարձել են ընդամենը 388 տնտեսություն կամ բոլոր տնտեսությունների 11,3 տոկոսը։ Ընդ որում Կարսի օկրուգում վարձու բանվորներ են ունեցել օկրուգի հաշվառված 20 գյուղերի գյուղացիական տնտեսությունների 26,7 տոկոսը, իսկ Կաղզվանի օկրուգի 14 գյուղերի տնտեսությունների 6 տոկոսը։ Այլ խոսքով, վարձու բանվորներ ունեցող 388 տնտեսություններից 336-ը կամ 86,6 տոկոսը գտնվում էր Կարսի օկրուգում, 51-ը կամ 13,1 տոկոսը՝ Կաղզվանի օկրուգում, իսկ Արդահանի և Օլթիի օկրուգներում այդպիսիք շատ անհնշան են արձանագրվել։ Սա մեկ անգամ ևս վկայում է Կարսի և Կաղզվանի օկրուգներում գյուղացիական տնտեսությունների սոցիալական ավելի խոր շերտավորման մասին, որոնք տնտեսապես ավելի սերտ էին կապված Անդրկովկասի և մետրոպոլիայի հետ, քան Արդահանի և Օլթիի օկրուգները։

Գյուղացիական տնտեսությունների ուսումնասիրությունից պարզվում է, որ պատերազմի տարիներին ազատ աշխատող ձեռքերի համեմատական պակասի պատճառով վարձու աշխատանքը շատ մեծ ծավալ չէր ստացել։ Այդուհանդերձ, համեմատած անցյալ դարավերջի՝ 1897 թ. ընդհանուր մարդահամարի տվյալների հետ, նկատվում է վարձու աշխատանքի օգտագործման զգա-

---

16 Т. Ф. Арестова. Курды Закавказья. М., 1966, с. 54.

17 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 125, ց. 1, գ. 895։

18 С. Заваров. Նշվ. աշխ., էջ 264, 426—427 և ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 125, ց. 1։

լի աճ։ 20 տարվա ընթացքում այն ավելի քան կրկնապատկվել է՝ 5,4 տոկոսից[19] հասնելով 11,3 տոկոսի։ Փաստերը ցույց են տալիս, որ ուրիշի աշխատանք օգտագործել են հիմնականում հարուստ և միջակ տնտեսությունները՝ 91 տոկոսից ավելին, մինչդեռ չքավոր տնտեսությունները՝ ընդամենը 8,5 տոկոս։

Գյուղատնտեսական վարձու աշխատանքի տիրապետող ձևը օրամշակությունն էր։ Այսպես, արձանագրված ընդամենը 3803 դեպքից 3566-ը կամ մոտ 94 տոկոսը եղել են օրամշակներ և միայն 237 դեպքում եղել են տարեկան, ժամկետային կամ գործարքային աշխատողներ։ Սա ցույց է տալիս, որ վարձու աշխատանքի համակարգը դեռևս տևական բնույթ չէր կրում. դա մասամբ բացատրվում է ժամանակավոր բնակվողների և առաջին հերթին՝ արևմտահայ գաղթականների առկայությամբ, որոնց տեղում մնալու անկայուն վիճակը թելադրում էր նախընտրել օրավարձու աշխատանքը։ Հատկանշական է, որ տարեկան, ժամկետային և գործարքային աշխատողներ արձանագրվել են բացառապես հարուստ տնտեսություններում, իսկ միջակ և չքավոր տնտեսություններում՝ միայն օրամշակներ։

Կովկասի գյուղատնտեսական ընկերության հավաքած տվյալներով 1914 թ. օրավարձու բանվորը դաշտային աշխատանքների համար ըստ օկրուգների օրական ստանում էր՝ Արդահանի օկր.—54 կոպ., Կաղզվանի օկր.—62 կոպ., Կարսի օկր.—61 կոպ., Օլթիի օկր.— 40 կոպ.[20]։ Բերված տվյալներից երևում է, որ վարձու աշխատուժի արժեքը բարձր է եղել Կաղզվանի և Կարսի օկրուգներում՝ 62 և 61 կոպ., այսինքն այն շրջաններում, որտեղ ապրանքա-կապիտալիստական հարաբերությունները առավել ուժեղ էին զարգացած, իսկ մյուս կողմից՝ ցածր է եղել Օլթիի օկրուգում՝ 40 կոպ., որտեղ վարձու աշխատանքի վրա հիմնված կապիտալիստական հողագործությունը դեռևս թույլ էր, հետևապես և վարձու աշխատանքի պահանջարկը ու բնականաբար նրա գինը ցածր էր։ Եվ պատահական չէ, որ 1917 թ. հաշվեհամարի տվյալներով ամբողջ օկրուգում արձանագրվել է վարձու աշխատանքի ընդամենը մի քանի դեպք։

Ազգային կազմի տեսակետից վարձու աշխատանքի օգտագործումը ավելի տարածված էր հայկական գյուղերում։ Վարձու բանվոր ունեցող 388 տնտեսություններից 299-ը կամ 77,1 տոկոսը հայկական էին, իսկ մնացածը՝ 22,9 տոկոսը՝ ռուսական, քրդական, հունական, թուրքական։ Դա ցույց է տալիս հայ գյուղում սոցիալական պրոցեսների խորացման և կապիտալիստական վարձու աշխատանքի կիրառման բարձր աստիճանը։ Մյուս կողմից՝ պատերազմի տարիներին քրիստոնյա բնակչության՝ հայերի. ռուսների, հույների բանակ զորակոչվելու հետևանքով հայկական և մյուս քրիստոնյա գյուղերում աշխատող ձեռքերի ավելի սուր կարիք է զգացվել, որը և հարկադրում էր նրանց ավելի հաճախակի դիմել վարձու աշխատանքի օգտագործմանը։ Պատահական չէ, որ հայկական գյուղերում աշխատող ձեռքի կարիքն այնքան նկատելի է եղել, որ վարձու աշխատանք են օգտագործել ոչ միայն ունևոր ու միջակ, այլ անգամ չքավոր տնտեսությունները։ Այսպես, վարձու աշխատանք օգտագործած չքավոր տնտեսությունների 90 տոկոսը կազմում էին հայկականները։

Վարձակալության համակարգի բնորոշ տարրերից է հողի վարձակալությունը, որն իր բովանդակությամբ հիմնականում կրում էր կապիտալիստական վարձակալության բնույթ։ Վարձավճարի հարցում տիրապետում էր գերազանցապես դրամական ռենտան։

Տեղին է նկատել, որ հողի վարձակալության հարցում հաշվառող մարմինների լրացրած հարցաթերթիկներում տեղ են գտել որոշ թերություններ։ Օրինակ, երբեմն վարձակալած հողը ոչ ճիշտ կերպով մտցրել են վարձակալողի բաժնեհողի քանակի մեջ, իսկ վարձակալության տալու դեպքում ընդհակառակն է արված։

---

[19] А. С. Амбарян. *Նշվ. աշխ., էջ 131։*

[20] Урожай и состояние скотоводства в Закавказье в 1914 г. Тифлис, 1915, с. 26.

Հողի վարձակալությունը մարզի ոչ բոլոր գյուղերում էր տարածված։ Մեր կողմից հետազոտված 77 գյուղերից հողի վարձակալության են դիմել ընդամենը 21 գյուղեր։ Հողի վարձակալական համակարգը հատկապես ուժեղ էր տարածված Կարսի օկրուգում, համեմատաբար թույլ՝ Արդահանի և Կաղզվանի օկրուգներում, իսկ Օլթիի օկրուգում՝ այն գրեթե բացակայել է։ Ինչպես պարզվում է գյուղատնտեսական հաշվեհամարի Օլթիի օկրուգին վերաբերող ամփոփիչ աղյուսակի տվյալներից, ամբողջ օկրուգում 1917 թ. վարձակալվել է ընդամենը 7 դես., որից 3 դես. վարելահող և 4 դես. խոտհարք[21]։

Հաշվեհամարի նյութերից երևում է նաև, որ մարզում տարածված էր կարճաժամկետ վարձակալությունը։ Հողի վարձակալման և վարձակալության տալու համար որպես կանոն սահմանվում էր ժամկետ 1 կամ 2 տարի և հազվադեպ կարելի է հանդիպել երկարաժամկետ՝ երեք, հինգ և ավելի տարով վարձակալության։ Հատկանշական է, որ ամբողջ Անդրկովկասյան երկրամասի համար ընդհանրապես բնորոշ է եղել մանր և կարճաժամկետ վարձակալությունը[22]։ Ըստ երևույթին կարճաժամկետ վարձակալությանը նպաստում էր նաև պատերազմական ժամանակաշրջանը և երկրում տիրող սոցիալ-քաղաքական անկայուն վիճակը։ Կարճաժամկետ վարձակալությունը տնտեսական և ագրոնոմիական տեսակետից պարունակում է այն վնասը, որ վարձակալը, չհետևելով հողի ստրուկտուրայի, արգավանդության պահպանմանը, պարարտացմանը, ցանքաշրջանառության համակարգին և ագրոնոմիական այլ միջոցառումների, աշխատում է մեկ-երկու տարում «քամելով հողը», որքան հնարավոր է շատ բերք ստանալ, որի հետևանքով հողը արագորեն ուժասպառ էր լինում։

Վարձակալության խնդրում շատ պարզ ու հստակ երևում է, որ որպես կանոն հողի վարձակալության են դիմում ունևոր տնտեսությունները և ընդհակառակը, հողը վարձակալության են տալիս սակավազոր ու անհրաժեշտ բանուժ և այլ գյուղատնտեսական գործիքներ չունեցողները։ Հաշվեհամարի հողի վարձակալությանը վերաբերող տվյալներից երևում է, որ գյուղացիական խմբերը ավելի կամ պակաս չափով դիմել են հողի վարձակալության։ Ընդ որում, ունևոր տնտեսությունները իրենց ձեռքում կենտրոնացրել էին ամբողջ վարձակալած հողի 62,3 տոկոսը, միջակ տնտ.՝ 28,8 տոկոսը, իսկ աղքատ տնտ.՝ ընդամենը 8,9 տոկոսը։ Նշանակում է՝ մարզում գերակշռում էր ունևոր գյուղացիների վարձակալությունը՝ է՛լ ավելի հարստանալու նպատակով։ Ազգային կազմի տեսակետից վարձակալած հողի կեսից ավելին՝ 55 տոկոսը կատարել են հայերը, 21,6 տոկոսը՝ թուրքերը, 9,2 տոկոսը՝ ռուսները և այլն։

Եթե հողը վարձակալում էին հիմնականում ունևոր (կարող) տնտեսությունները, ապա վարձակալության էր տալիս գերազանցապես չքավորությունը՝ անհրաժեշտ բանուժ, սերմացու և գյուղատնտեսական գործիքներ չունենալու պատճառով։ 1917 թ. հաշվեհամարի՝ մարզին վերաբերող հարցաթերթերի տվյալները աներկբայորեն այդ են հաստատում։ Այսպես, հողը վարձակալության տված տնտեսությունների 84,8 տոկոսը կամ հողի 87,6 տոկոսը կազմել են չքավոր տնտեսությունները։ Ըստ որում հող վարձակալության տված տնտեսությունների ավելի քան 85 տոկոսը ոչ մի ինվենտար չուներ, այն դեպքում, երբ 77 գյուղերում գյուղատնտեսական ինվենտար չունեին գյուղացիական ծրխերի 39,6 տոկոսը։

Այսպիսով, կոմպլեքսային մոտեցմամբ համադրելով ու խմբավորելով մարզի 77 գյուղերի գյուղացիության սոցիալ-տնտեսական և ունեցվածքային հատկանիշի գրեթե բոլոր հիմնական ցուցանիշները՝ հողաբաժինը, ցանքը,

---

21 ՀՍՍՀ ՊԿՊԱ., ֆ. 125, ց. 1, գ. 1011, թ. 35։

22 Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края. Т. V, ч. 2, Тифлис, 1888, с. 123.

անասնագլուխը, բանուժը, վարձու աշխատանքը, հողի վարձակալական համակարգը, գյուղատնտեսական ինվենտարը, ինչպես նաև ընտանիքի կազմը և այլն, տեսնում ենք, որ գյուղացիության սոցիալական կազմը (խմբերը) ներկայացնում էր հետևյալ պատկերը. ունևորներ՝ 13,6 տոկոս, միջակներ՝ 43,6 տոկոս, չքավորներ՝ 42,8 տոկոս, որը խոսում է մարզի գյուղացիության սոցիալական շերտավորման խորացման և մեծ Հոկտեմբերի նախօրյակին սոցիալիստական հեղափոխության օբյեկտիվ պայմանների որոշակի հասունացման մասին։

СОЦИАЛЬНЫЙ СОСТАВ КРЕСТЬЯНСТВА КАРССКОЙ ОБЛАСТИ

(по материалам сельскохозяйственной переписи 1917 года)

А. М. АКОПЯН

(Резюме)

Для изучения социального состава крестьянства Восточной Армении дореволюционной эпохи ценные данные содержат материалы Всероссийской сельскохозяйственной переписи 1917 г., хранящиеся в фонде № 125 ЦГИА Армянской ССР. Комплексное изучение социально-экономических показателей 77 сёл (в количестве 3442 крестьянских хозяйств) Карсской области по наделам, посевам, поголовью скота, рабочей силе, наемному труду, арендным землям и др. показывает, что накануне Великого Октября в области значительно углублялось социальное расслоение крестьянства, хотя этот процесс в некоторой мере уступал аналогичному процессу в Ереванской губернии. Так, в Карсской области имущие составляли 13,6%, середняки—43,6%, неимущие—42,8%.